

«ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի 7-րդ մասում «կայքում» բառից հետո լրացնել «և նույն ժամկետում ներկայացվում են լիազոր մարմին՝ Նորմատիվ իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում հրապարակելու նպատակով:» բառերով:

Հոդված 2. Օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասում, 49-րդ հոդվածի 2-րդ մասում, 77-րդ հոդվածի 1-ին մասում ««Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության» բառերը փոխարինել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» բառերով:

Հոդված 3. Օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասում «կայքում» բառից հետո լրացնել «և նույն ժամկետում ներկայացվում են լիազոր մարմին՝ Նորմատիվ իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում հրապարակելու նպատակով:» բառերով:

Հոդված 4. Օրենքի 106-րդ հոդվածի 1-ին մասում ««Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածով» բառերը փոխարինել ««Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով» բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրը: